# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ- ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)

ԱԺԲԳ













* ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր

** Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

*** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

2020 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1385.2 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. տարեկան հաստատված ցուցանիշի 86.5 %-ով, ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում 2020 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ճշտված ցուցանիշին գերազանցում է 0.4 տոկոսով կամ 5,8 մլրդ դրամով, իսկ 2020 թվականի պետական բյուջեի փոփոխությունների հիմնավորմամբ նախատեսված մակարդակը գերազանցում է 4,9 տոկոսով կամ 64,7 մլրդ դրամով: Ընդ որում, 2020 թ. փաստացի ցուցանիշը 2019թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 5.4 %-ով կամ 79.1 մլրդ դրամով, իսկ 2018թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 10.1 %-ով կամ 127.1 մլրդ դրամով:

2020 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 471.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 0.6 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 7.6 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 148.8 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 17.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 12.5 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 411.2 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 0.2 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 15.3 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 123.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 0.4 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 13.4 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 68.3 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 28.3 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից պակաս է 14.9 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 43.0 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 7.4 %-ով, իսկ 2018 թ. մակարդակից ցածր է 4.6 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են շուրջ 26.2 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 8.4 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում՝ 24.5 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 22.3 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 31.1 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշից բարձր է 38.8 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 22.7 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 16.4 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 24.3 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 29.1 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 26.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 12.5 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2020թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմել են -329.6 մլն դրամ՝ 2019թ. -1,048.1 մլն դրամի և 2018թ. -55.3 մլրդ դրամի դիմաց:

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ